ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

27 հուլիսի 2015 թվականի N 345-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 42-րդ և 44-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «ԳԵՈՌԵՅԴ» ՓԲ ընկերության 2015 թվականի մարտի 24-ի թիվ 4 դիմումը, ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման թիվ ԲՓ 48 դրական եզրակացությունը.

Հրամայում եմ

1. «ԳԵՈՌԵՅԴ» ՓԲ ընկերությանը՝ ՀՀ Սյունիքի մարզի Մուցքի (Բարձրավան) ոսկի-բազմամետաղային հանքերևակումում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար 2012 թվականի հուլիսի 13-ին տրամադրված թիվ ԵՀԹՎ-29/066 թույլտվության մեջ կատարել փոփոխություն՝ ժամկետը երկարաձգել՝ 2 տարով, նվազեցնել զբաղեցրած տարածքը 1200 հա-ով, սահմանել 1200 հա հետևյալ կոորդինատներով՝

1) 1.X=4377492 Y=8577060 2.X=4377492 Y=8578250 3.X=4378742 Y=8578250 4.X=4378742 Y=8579900 5.X=4373992 Y=8579900 6.X=4373992 Y=8577060 (տրված է ARM WGS-84 համակարգով),

2) թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2017 թվականի հունիսի 30-ը:

2. *Աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝*

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն 2012 թվականի հուլիսի 13-ին՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թիվ ՊՎ-066 ընդերքօգտագործման պայմանագրում և ծանուցել ընկերությանը՝ հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին.

2) օրենքով նախատեսված ժամկետի սահմաններում փաստաթղթերում կատարված փոփոխությունները ներկայացնել իմ վավերացմանը.

3) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացվելուց հետո, 10-օրյա ժամկետում, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության, ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխված տարբերակը,

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. *<Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի տնօրենին* - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ